

նակաւ յուսոյն եւ հետեւոյ՝ շինին քաղաքաւոր մարտիրոսացն, եւ յորժամ ընթեռնուուն եւ շինն զքաղաքաւոր մարտիրոսաց, նա զնեզ յաղաքս իւրեանց: ... Ու իւր աղաչեմք զքահանայոց, որ զկարողան անփոյր չայնիք վասն սիրոյն Քրիստոսի որ [եւ աւրհեմալ] յաղիսեանս:

Այս յիշատակարաններուն մէջ Լեոն Թագաւորէն զատ կը յիշուին Պարոն Վասիլ Բաղլէր եւ Գրիգոր Երէց: Վասիլը՝ յիշատակարանէն կ'երեւի, Լեոն Թագաւորին քեռին է, անոր պաշտօնն էր արքունի սեղանին անտեսութիւն, որ կ'ըսուի Պոպլեռլսա Ալիշանի («Սխառւան» 484-485) Պոպլեռլ բառով պէտք է հասկնալ Ֆրանս. Boutillier բառը, որ կը նշանակէ սեղանապետ: Իսկ Գրիգոր Երէց արքունի տտենագրիրն էր:

Նուիրուած ձեռագրին վերոյիշեալ յիշատակարաններուն մէջ Քէրէկի եկեղեցւոյն անունը չէ յիշուած, բայց Երուսաղէմի հայ պատմիչները կը յիշատակեն թէ նոյն եկեղեցւոյն անունն է Ս. Գեորգ, եւ մեր առած տեղեկութեանց նայելով՝ Քէրէկի իսլամական թաղին մէջ կը գտնուի եկեղեցի մը նոյն անուամբ, եւ տարին մի անգամ, Ս. Գեորգի տօնին, Յոյնք հոն կ'երթան պատարագելու. տարակոյս չկայ թէ նոյն եկեղեցին կը վերաբերէր Հայոց, եւ օտարական հնախօսի մը գրածին համաձայն, նոյն եկեղեցւոյն մէջ մինչև ցարդ անմլաս կը մնան պատերուն որմանկարները:

Քէրէկէն բերուած յիշատակարան-քարի մը կեղծ արձանագրութենէն խարուելով՝ Աստուածատուր եպիսկոպոս Տ. Յովհաննէսեան իր Պատմութեան մէջ կը գրէ (Ա. հատ. էջ 187-188) թէ Քէրէկ ունեցած է նաեւ Ս. Յակոբ անուամբ եկեղեցի մը, Հեթում Թագաւորէն շինուած. նոյնը կը կրկնեն ծանօթ հնագէտ Քլէմօն Կաննօ եւ Բրօֆ. Մաքլէր, յենլով նոյն կեղծ յիշատակարանին վրայ որ այժմ կը գտնուի մեր ժառանգաւորաց Վարժարանի թանգարանին մէջ, եւ յայտնի է անոր կեղծութիւնը այլանդակ եւ անընթեռնի գրերուն ձեւէն:

Մեր այս տողերուն եզրակացութիւնը սա է թէ Քէրէկի հայք գաղթած էին Կիլիկիոյ կողմերէն, Սալակրաց ժամանակ, Կիլիկեցի Թագաւորներ մասնաւոր հոգածութիւն ունէին անոնց վրայ. կառուցած էին Ս. Գեորգ եկեղեցին, դժբախտ պարագաներ եւ ճանապարհներու դժուարութիւնները պատճառ դարձան որ ցրուի նոյն գաղութը եւ այլք տիրանան անոր եկեղեցւոյն: